

7714

Гуляш к. к.
и ррн ст-у-ф-у-р

891.99

9-20

Гуляш к. к.
1913

Ը. ԳԸԼՍՏԵՐՆ

47/46
257

ՍԻՐՈՅ ՄԵՂԵԴԻՆԵՐԸ

Նուէր իմ ընկերունդս.

Վաղարշապատ
Երեմեայի Եկեղեցիի Ս. Եղիշի
1913

891.99

Գ-20

2003

47146

95 Ս. Զահարյան

891.89

9-20

Ը. ԳՐԱԴԱՐԱՆ

ս

4953

ՄԻՐՈՅ ՄԵՂԵԴԻՆԵՐԸ

Նուէր իմ քնկերունդս.



Վաղարշապատ

Երեսնամեակի տարեգիրք Ս. Էջմիածնի

1913

20059-Կ-3.



*
*
*

1

Անուշիս համար վարդեր եմ քաղել,
Վարդեր եմ քաղել ցօղով շաղախուած,
Թերթերին աչքիս արցունքն եմ մաղել,
Եւ փունջ եմ կապել կարօտից այրուած:
Անուշիս համար երգեր եմ հիւսել,
Երգեր եմ հիւսել աստղերին յառած,
Աստղերին սրտիս գաղտնիքն եմ ասել,
Խաղաղ գիշերին սիրով բորբոքած:
Անուշիս համար երազ եմ տեսել,
Ոսկի երազը լուսով շաղախուած,
Ու նրա գովքը աստղիցն եմ լսել,
Շողշողուն աստղից սիրով այրուած:
Ու այդ բոլորով, անուշ թագունհիս,
Ծեծում եմ դուռդ սիրակէզ սրտով.
Երգերով հարուստ քեզ պաշտող հոգիս,
Քեզ է սպասում անուշ կարօտով:



Ե՛լ, եկ, դուրս արի, գիշերն է անուշ,
 Ու չաք աչքերը փակուած են իսպառ,
 Աչքերիդ համար աստղիկը քնքուշ,
 Լոյս է սրանկում գիւթիչ ու պայծառ:
 Շրթներիդ համար շուրթս գողգոջուն
 Համբոյրներ ունի քաղցր ու անհատնում,
 Լանջս սիրոյ դող և սիրոյ գարուն,
 Քո լանջի համար նուէր է բերում:
 Անուշ, քեզ համար վարդեր եմ քաղել,
 Վաղ առաւօտեան ցօղով շաղախուած,
 Նորա թերթերին արցունքս եմ մաղել,
 Աչքիս արցունքը քո ճամբին յառած:

2.

Պարզ գիշեր էր, երկինքը լուռ ու խաղաղ,
 Աչիկներս աստղիկներին յառեցի,
 Աստղիկները սիրտս սիրով վառեցին,
 Ծաղիկները ինձ ուսուցին սիրոյ տաղին:
 Ու գողալով դուռը ծեծի անուշիս,
 Դռնակդ բաց... ըսի նրան քնքշաբար,
 Դռնակը բաց... ձայն տուեցի իմ նուշիս,
 Բաց դռնակը... ու ծեծեցի անդադար:
 Բաց ասացի... մութը անխօս ու թաքուն

Վաղուց արդէն ողջ աշխարհին բերած քուն,
 Ինձ է միայն աստղիկներով իւր պայծառ,
 Առաջնորդել դէպի դուռդ սիրավառ:
 Բաց ասացի... դուրս շտապիր նազելիս,
 Տես, ի՞նչ անուշ, ի՞նչ բիւրեղիկ հայեացքով
 Ողջ եթերն է խնդում, ցնծում ու լալիս,
 Լալիս սիրոյ քաղցր ու վճիռ արցունքով:
 Բաց ասացի... դուրս շտապիր, անուշիկ,
 Դիրկս գահդ, սիրտս քուրմդ մոլեռանդ,
 Աչքդ յառիր մարգարտաշող աստղիկին,
 Ու պալատդ ողջ տիեզերքն անսաման:
 Ես քեզ կասեմ, թէ ի՞նչ արժես ինձ համար,
 Ի՞նչ վարդենիք, ի՞նչ ծաղիկներ, ի՞նչ գարուն,
 Ի՞նչ օրհներգներ, ի՞նչ նուագներ անհամար,
 Պատրաստել է սիրտս ծաղիկ ու գարուն:
 Օ՛, չգիտես քաղցրութիւններն լուսթեան,
 Երբ հոգին է շրթների մէջ թռթռում,
 Ու շրթները սիրականի լուելեան
 Այս ու շրթներն համբոյրներով են վառում:
 Օ՛, չգիտես քաղցրութիւններն գիշերուան,
 Երբ սիրածդ աղանուս պէս հէզ ու մունջ
 Դիրկդ ընկած գարուն մարմնով աննման
 Տանում է քո գգուանքները անմոռնչ:
 Ու աստղերը, ու ծառերը ու ծաղիկունք,

Շող ու բոյրով, ու երգերով քաղցրալուր
 Ծնում են նոր սիրոյ կսկիծ ու երկունք,
 Սիրոյ մայիս, սիրոյ արև ու փրփուր:
 Բայց ասացի... դուրս շտապիր աղանեակ,
 Աստղերի տակ սպասում եմ քեզ մենակ,
 Սիրտս փրփրած քո անուշիկ գորովով,
 Դուռդ եմ ծեծում, ել, շտապիր դուրս շուտով:
 Պարզ գիշեր էր, երկինքը լուռ ու խաղաղ,
 Աստղերը վառ, սիրտս հրգեհ սիրակէզ,
 Ծեծում եմ դուռն իմ անուշիկ մտազբաղ,
 Աստղերի տակ, ըստուերի մէջ ու անտես:
 Բայց ձայն չկայ. ու արցունքը ցողազին,
 Դուրս է ցայտում կայլակներով անդադար,
 Ու յուսախաբ և բորբոքուած իմ հոգին
 Սև վշտերի ամպն է հագնում դառնաբար:

3.

Քո կախարդանքով հոգիս է ծաղկում,
 Քաղցր հմայքդ սրտիկս է երգում,
 Քեզ երկրպագել տենջում եմ սրտանց,
 Օրհներգ եմ հիւսել սիրտիցս ծակած:

Քո գիրկ, քո իրան, քո այտն ու շրթներն
 Փարթամ եղէմի գեղով զարդարած,
 Սրտիկս են վառում ցերեկ ու գիշեր,
 Յերեկ ու գիշեր քեզնով պապակած.
 Ու այն տեղ բուրմունք, կնդրուկ ու հափուէ,
 Եւ այնտեղ շողեր սուրբի մոմերի,
 Խնկում է վառում քուրմդ մոլեռանդ,
 Խանդակաթ սիրով, սիրտս, քեզ գերի:
 Բայց դեռ վախերից սիրտս բռնուած,
 Ազատ օրհներգը քեզ դեռ չի կարող,
 Դուցէ չքնաղդ, յանկարծ զայրացած
 Զրկես խեղճ սիրտս շողերից փաղփոգ:
 Շողերից փաղփոգ, շողերից անուշ,
 Որ քեզնից ծածուկ գողացաւ հոգիս
 Ու գարուն բերաւ տենջերիս քնքուշ,
 Որ նիրհում էին խորքումը սրտիս:
 Օ, եթէ երկինքն ինձ հաշտ ժպիտով
 Ուզում է բաշխել անուշ ըոպէներ,
 Թող ինձ նուիրէ ոսկի ձեռներով
 Մարմինդ ծաղիկ, հոգիդ համակ սէր:
 Քո կախարդանքով հոգիս է ծաղկում,
 Սիրուդ ծարաւից թոշնանքն է հագնում,
 Տուայտանքներից խամրում է մարում,
 Սիրտս գերեզման ծաղկունքն է թաղում:

Անուշ, իմ անուշ, երկնքի աստղերն
 Քեզ համար են լուկ վառում սիրավառ,
 Նոցա այրել է քո անուշիկ սէրն,
 Սիրովդ են այգքան շողշողում պայծառ:
 Քեզ համար է լուկ այգը լուսահեր
 Լեռներին փռում լոյսը ծիրանի,
 Ու աղօթքանը վառած կնդրուկներ
 Զմայլած քեզ է նայում գիւթանքով:
 Արշալոյսներից, աղօթքանից շատ
 Իմ սէրն է վառում գիւթանքով լեցուած,
 Անուշ տենջերի բոցովն հարազատ
 Վաղուց եմ ես քեզ կնդրուկներ վառած:
 Ու այդ կնդրուկներն անուշ բոյրերով
 Բղխում են փարթամ սրտիս խորքերից,
 Որեւ ծաղկած է քո անուշ սիրով,
 Փթթած է շրթիդ քնքուշ ժպիտից:
 Ու ես ուզում եմ գրկել քեզ լացով,
 Ու զգուանքներով քո գովքը երգել,
 Ու կրծքիս սեխմած, երկիւղած հարցով
 Ուզում եմ հոգուդ գաղտնիքներն գտնել:

Անուշիս աչքերն արցունքն է լեցուել,
 Անուշիս աչքերն արցունքն է թացել,
 Անուշս սրտի ցաւիցն է լացել,
 Իւր ցաւ վշտերով սրտիկն է խոցել:
 Անուշիս շուրթը ցաւիցն է դողում,
 Թաց աչքերի մէջ կայծեր են շողում,
 Քնքուշ կրծքի տակ կսկիծն է սողում,
 Նրա կսկիծը սրտիկս է թաղում:
 Ու մօտենում եմ ահով դու ողով,
 Ու մօտենում եմ քաղցը երկիւղով,
 Գլուսում եմ նրան լի գորովանքով,
 Նրան եմ գրկում առատ արցունքով:
 Ասա, սիրունիկ, ասա իմ քնքուշ,
 Ի՜նչ ցաւ է տանջում սրտիկդ անուշ,
 Ասա, իմ անգին, իմ կոկոն, իմ նուշ,
 Միթէ դեռ մատաղ սիրտդ ունի փռւշ:
 Ասա, լաց լինեմ քո տեղ տարիներ,
 Յերեկը մինչ իրկուն ու ողջ գիշերներ.
 Միայն թող սիրտդ, զարնան պէս փարթամ
 Ծաղկի ու բուրբէ միշտ ու ամէն ժամ:
 Անուշիս աչքերն արցունքն է լեցուել,



Անուշիս այտերն արցունքով թացուել,
Փարթամ կրծքի տակ կսկիծն է սողում,
Կսկիծով սիրտս է այրում ու դաղում:

6.

Ու ժպտիդ կարօտ ես քեզ եմ նայում,
Սկ մտածմունքի թախիժը սրտիս,
Աչքերիս արցունքն վաղուց ցամաքած,
Սիրոյ կրակն է այրում իմ հոգիս:
Մօր սէրն ինձ համար անցել է ինչպէս
Կարճատե քնի մի տօգոյն երազ,
Ձեմ տեսել, աւաղ, և քրոջ երես,
Կեանքս անցել է խիստ արագավազ:
Ու կնոջ սիրով—ասում է հոգիս,
Կարող ես լինել դու շատ բաղդաւոր,
Ու խուլ հեքերը սիրամաշ կրծքիս,
Խփում են, խփում խիստ ու անսովոր:
Սիրում եմ, Անուշ,
Սրտիս հեքերին շուտ տուր պատասխան,
Թե երդ պարզիր իմ թոյլ ուսերին,
Լսիր իմ սիրոյ մեղմ ու քնքուշ ձայնն:
Տես ինչպէս հանգիստ աղաւնու նման,
Հնչում է նա քեզ նազիկ ու քնքուշ,

Անհուն տենջերով, սիրով սրբազան,
Երգեր է հիւսում տենջերից անուշ:
Ու ժպտիդ կարօտ ես քեզ եմ նայում,
Նազիկ իմ անուշ, իմ նուան հատիկ.
Քեզ համար սիրտս վաղուց է մաշում,
Իմ նուշ, իմ անուշ, քաղցր ու քնքուշիկ:

7.

Անուշ իմ անգին, ցուրտ է ու խաւար,
Ծառերն են ողբում կսկիծով լեցուած,
Սուլում է քամին. սիրտս անհամար
Դառն ցաւերով վաղուց է խոցուած:
Հեռու միմեանցից հազար վերստերով,
Մեզ բաժանում են սարերն ու քարեր,
Մեզ բաժանում են անապատն ու ծով,
Գիշերուայ խաւարն ու խուլ անդունդներն.
Բայց հոգիս կարօտ, քամուց էլ արագ,
Ճեղքում է խաւարն այս ցուրտ ժամանակ,
Անցնում է լեռներ, դաշտերն ընդարձակ,
Ու մեղմ ծեծում է քո փոքրիկ դռնակն,
Ու ձայն եմ տալիս յոգնած, դողդոջուն,
— Բաց ինձ դռնակը անուշ իմ անգին,
Շուրջը քամի է, խաւար ու աշուն,

Ու դողդոզում եմ ես ցրտիցն ուժգին,
 — Բաց ինձ դռնակը ու սեխմիր կրծքիդ
 Անուշ կարօտով, իմ կուրծքս սառած,
 Ու ջերմութիւնովն անուշ շնչիկիդ:
 Կեանք տուր իմ հոգուս յոգնած ու թմրած:
 Բաց ինձ դռնակդ, կարօտովդ լեցուած
 Անցել եմ սարեր, դաշտեր անհամար,
 Եկել եմ արագ, շնչասպառ, խոցուած,
 Եկել եմ լոկ քեզ գրկելու համար:
 Բաց ախ, լսում եմ, գայրացկոտ ու կարճ
 «Կորիւր» ասում է նա ներսից յանկարծ,
 «Կորիւր» քեզ երբէք ես չեմ ճանաչած,
 Սիրտս դողում է անեղ լքումից,
 Հոգիս մնում է լուռ ու քարացած:
 Չորս կողմ սև խաւար, ու աշնան քամին,
 Քամու հետ մէկ տեղ դռնակին մօտիկ,
 Իգուր ենք ծեծում կրկին ու կրկին
 Իգուր ենք հայցում բառերով գողտրիկ:
 Նա արգէն մոռցած անթիւ գգուանքներն,
 Խօսքերն փաղաքուշ, սիրով ներշնչուած:
 Դռնակի նման սրգի դռնակն էլ
 Աղերսանքիս դէմ վաղուց է փակած:
 Ու կորուստով մեծ, կարօտս չառած
 Անցնում է հոգիս խաւարի միջով,

Մտնում եմ տեղս յուսահատ լքուած,
 Չարատանջ կրծքիս ձեռներս խաչած:
 Ու քամին դարձեալ սուլում է փչում,
 Ու իմ ականջին կրկնում անդադար,
 «Կորիւր, քեզ երբէք ես չեմ ճանաչում»
 Ու քունս եմ մտնում ես անմխիթար:

8.

Պարզ է երկինքը. վառուում են աստղերն,
 Իրիկուայ շողերն մարել են խալառ,
 Հեռու հորիզոնն փռած իւր թևերն
 Խլում է աչքիցս երկինքներ պայծառ:
 Ու երկինքներից մէկն է, որ հոգիս
 Քաշում է իրեն ամէն ժամանակ,
 Այդ այն երկինքն է, որ իմ շրթներիս
 Տուաւ ջերմ սիրոյ անուշիկ բաժակն:
 Ու ճաշակեցի՝ սիրունիս գրկած
 Գարնան ժամանակ իրիկնապահին
 Երբ մաքուր շողով երկինքը լեցուած,
 Ժրպտում էր վերից սիրող զոյգերին:
 Ու թարմ ծաղիկներն կնտրուկով անուշ
 Խունկ էին սփռում կանանչ դաշտերից.
 Ու մացառները կանանչով քնքուշ

Երգ էին բաշխում իրենց խորքերից:
 Իսկ գիշերները՝ իմ ցնորքներով
 Էկեցում էր ամբողջ երկինքն ու երկիր,
 Աստղը ժպտում էր առանձին փայլով,
 Առանձին խանթէր բաշխում ինձ եթերն:
 Հէնց նոյն հորիզոնն տուաւ ինձ լեզին,
 Սիրտս վայր դարձաւ անվերջ հոգսերի,
 Պատրաստեց սիրոյս մահուան անկողին,
 Մարեց ճահերը քաղցր յոյսերի:
 Նոյն հորիզոնն է աչքս որոնում
 Ուր արդէն վաղուց թռել է հոգիս,
 Յիշատակների անվերջ խորքերում
 Թերթեր է փնտրում գարնան վարդերի.
 Փնտրում է աստղերն, բուրմունք ու ժպիտ,
 Գգուանք ու զրոյց արցունքով ցողուած.
 Եւ կսկիծները, ցաւերը կոպիտ
 Չար լեզուների թոյնով՝ ողորուած:
 Աչքս փնտրում է, բայց անի, նա չկայ:
 Ու կսկիծներից թափում եմ արցունք,
 Ու այդ բոլորին կանգնած են վկայ
 Միայն սենեակիս պատերը անշուք:
 Միայն հորիզոնն, որ իւր թևերով
 Պարիսպ է ձգում իմ աչքերիս դէմ,
 Միայն աստղերը, որ վառ ցոլքերով
 Միտս են բերում իմ կորած նշանն:

ՍԻՐՈՅ ԿՍԿԻԾՆԵՐ

1.

Ինձ հալածում են աչերդ անուշ,
 Ինձ հալածում է կասկածը վախկոտ,
 Շատ աչքեր այդպէս ժպտացին քնքուշ.
 Վառեցին սրտիս սիրոյ առաւօտն:
 Ու խոր յոյգերից գինովցած ուժգին
 Պաշտամունքների նուիրուեց մէկից,
 Երգեց, աղթեց, պաշտեց սրտագին,
 Շող, շաղ, բոյր խլեց գարնան օրերից:
 Ու սրտի անհուն խօսուն յոյգերով
 Բերաւ քեզ նուէր սիրով խանդավառ,
 Բերաւ քեզ նուէր պաղատանքներով
 Լռին գիշերուայ երկնի տակ պայծառ:
 Բայց անի, պաշտաման սրբազան ժամին,
 Հեգնանքը խաղաց շրթներին խաբող.
 Սիրտս որոտաց ցաւից դառնագին,
 Չքացաւ բերկրանք, ժպիտ, լոյսն ու շող:
 Ու տարակուսած լացել եմ երկար,
 Մէնակ ժամեր եմ ապրել տարիներ,
 Սիրտս հանգստի վաղուց սիրահար.
 Ուզում եմ սէրս փակի իւր աչեր:

Ուզում եմ փակի մեռնի յաւիտեան.
Իւր անարգանքի մրուրով խեղդուած.
Ու սիրաս նրա անշուք գերեզմանն
Ապրի մոռացման տենջանքով լեցուած:
Բայց այժմ դու ես ցցում իմ առաջ,
Քարնան պէս անուշ, կոկոն նորաբաց,
Աչքերիդ շողերն կեանքով առլցուած
Յարութեան շողնեն վառում երկնապանծ:
Ու սիրտս կրկին հարուստ թոթիւով,
Հարուստ վախերով խաբուած օրերի
Յուզում է մանուկ, կոկոն տենջերով,
Աչքերիդ շողին ու շրթիդ գերին:

2.

Ձգիտեմ թէ ինչո՞ւ համար վերստին
Խռոված է սիրտս խորքից և ուժգին,
Թաւալում է ծովերի պէս անսահման.
Օ՛ր, չ'գիտեմ, ի՞նչ է ուզում նա կրկին:
Աշունն անուշ իւր շողերը կախարդիչ.
Պատուհանից ներս է ըղրկել անխռով:
Շողերի տակ խեղճ գլուխս խոնարհած
Լաց լինել եմ ուզում անհուն կարօտով:
Լաց լինել եմ ուզում սիրտս կատաղած
Որ փրփրայոյզ ծովի նման ալեկոծ.

Խոր թնդում է և բողբոլւմ շարունակ,
Խենդ ու խելառ, դեկն ու սանձր կորցրած:
Ա՛խ, ո՞ւր է նա, որ շնչիկով կախարդիչ,
Խենդ յոյգերին սանձ կը դնէ ժպտալով,
Ու երգերովն համբոյրներովն իւր թովիչ
Ետ կը բերէ պարնան օրերն անխռով:
Աշունն անուշ իւր շողերով կախարդիչ,
Նեղ խցիկիս հիւր է եկել ջերմ սիրով.
Ու շնչիկովն ու ժպիտովն սփոփիչ
Հանգստեան օրն խոստանում է ինձ՝ շուտով:
Բայց ա՛խ սիրտս, սիրտս անհաստ մանկան պէս,
Լաց է լինում, աղմկում է շարունակ.
Աղմուկներից հոգիս հիւանդ աղեկէզ
Մոլորուել է, ու տանջում է շարունակ:

3.

Իմ անուշիկն սև գիշեր է տխրամած,
Թախիծների թոյնը ծծած շարունակ,
Ողջ աստղերը խաւարած են ու մարած,
Սև գիշեր է խուլ ու խաւար իմ հոգեալին:
Եկ մենք փախչենք լոյս արևից, բերկրանքից,
Եւ ժխորից երգ ու խինդի ընդունակ,
Թէ չէ նոքա մեզ կը ծաղրեն թունալից,



Կամ կը խղճան և կարտասուեն մեր վիճակն.
Արգահատանքն հեղնանքի պէս զժնդակ,
Երկունն էլ սուր երկսայրի են մահացու,
Կտրատում են սիրտն աղեկէջ շարունակ,
Սիրտը որբիկ, սիրտը այրի ու խեղճուկ:
Ե՛կ, հեռանանք. չունինք աստղեր լուսաւոր,
Լոյս ու շողեր շաղնելու ընդունակ,
Ոչ գարնան շունչ. թարմ ծաղիկներ գունագեղ.
Ո՛չ բոյր, ո՛չ ցօղ. ո՛չ էլ աչքի լոյսն ու շող:
Ու մենացած մենք արտասուենք մեր վիճակն.
Խաւարի մէջ, խուլ խցիկում և անտես,
Ու մեր վշտով վառուինք, այրուինք ու մարինք
Խաւարի մէջ կէս զիշերուայ աստղի պէս:

4.

Օ՛, կեանքն անուշ է, երբ գու ես ժպտում,
Երբ գու ես խնդում խաղաղիկ հոգով,
Երբ փարուսների յոյզովն անպատում
Թնդում է հոգիս քաղցր ու անխռով:
Օ՛, կեանք անուշ է, երբ շրթիդ վարդերն
Սիրոյ բուրմունքով անուշ խնկարկուած
Պատրաստ են տալու կիզիչ համբոյրներ,
Համբոյրներ անվերջ սիրով կըսկսած:

Ու կուրծքը կըծքին, անձայն խռոված
Խօսում է մեր մէջ սէրը համբոյրով
Երկրին մենք վաղուց. վաղուց խորդացած.
Շրջում ենք մենակ զինովցած սիրով:

5.

Իմ անուշիկ, ես մեղաւոր քո առաջ
Արտասուաթոր պաղատում եմ լալազին,
Դէմքս կնճռոտ, շրթիս հծծանք ու հառաչ,
Աղերսում եմ արտասուաթոր դառնագին:
Իմ ցաւերիս տուր շուտ վախճան մի խօսքով,
Ձնջիր մտքիս սին, խաբուսիկ երազներն,
Փրկիր հոգիս քո դիւթական հրաշքով,
Բուժիր սիրտս, բուժիր հոգիս կարեւելք:
Ես չեմ խնդրում վարդ այտերիդ բուրուսներն,
Ո՛չ նուշ շրթիդ համբոյրները գերապանծ.
Ինձ չեն գերում վառ աչքերիդ հուր շողերն
Եւ ոչ կոկոն թարմ կըծկքիդ եմ կարօտած:
Ինձ տանջում են յիշատակներն վաղանցուկ,
Քեզ սիրելով ողջ գիշերներ ես լացի,
Արտասուքներս երբէք չեղան ինձ նեցուկ,
Սիրոյ համար ես քո առաջ սողացի:
Այժմ և սէր, և այտի վարդ և գգուանք

Սև օձեր են սուր ժանիքով թունալիր,
Որ տալիս են ինձ և կսկիծ և տանջանք,
Այրևող սիրտս կը փոխարկուի շուտ մոխիր:
Լոկ սնտոխք երիտասարդ օրերի
Ձգչումներն ուղին բացին իմ դիմաց,
Նս չեմ ուզում մնալ այլ ևս քեզ գերի
Նս կուզէի ինձ ատէիր կատաղած:

6.

Էլ ինձ մի նայիր, թոշնում եմ արդէն.
Մահուան ցուրտ թոյնը կաթեց իմ սրտում,
Ձկան երազներն, գարուններն կանաչ,
Շրջում եմ մենակ լքուած ու արտում:
Էլ ինձ մի նայիր, շուրթս չունի վարդ
Ոչ այստ սիրոյ փխրուն ժպիտներն,
Աչքերս պղտոր, ճակատս անգարդ,
Փռուած է չորս դիւ մահուան ցուրտ գիշերն:
Էլ ինձ մի նայիր, իզուր քո յոյսը,
Թէ մի նոր կեանքով աճիւնս կրկին
Կը տայ բողբոջներ, ծաղիկ ու բուրմունք
Թարմութեամբ լեցուած կապրի իմ հոգին,
Կերգեմ մոլեռանգ խաբուած քո ժպտից,
Լեզուս քեզ ստրուկ, սիրտս քեզ գերի,

Եւ սարերն ընկած՝ լերան լանճերից
Ծաղիկ կը ժողուեմ՝ սիրովս վայրի:
Ծծել եմ թոյնը, լսել շատ հեգնանք,
Հառաչանքի մէջ ապրել է հոգիս,
Տարել եմ տանջանք. կրել եմ զրկանք,
Բայց քեզ եմ պաշտել խաբող թագունիս:
Շատ շրթեր են ինձ ժպտել կեղծաւոր,
Շատերն ինձ համար հեգնանք են բաշխել,
Շատ օր եմ տեսել սև ու ահաւոր,
Հոգիս ցաւերից շատ շատ է ծխել:
Բայց դեռ յուսատու աչերիդ յառած,
Նս քո սիրովն եմ ալրուել, տոչորուել.
Քեզ միշտ նոր գարուն, ինձ համար մեռած.
Սիրտս սաքերիդ կոխան եմ բերել:
Իսկ այսօր անցան յոյսերն ու հաւատ.
Հանգան կրակի և վերջին կայծերն,
Սիրում եմ խաւարն, փնտրում եմ գիշերն,
Ու փթութիւնը խեղճ կեանքիս լքուած:
Էլ շողն ու ցօղը, փթութիւններն ծաղկի,
Ի զուր են ցնցում սիրտս կարեւիւր,
Սիրտս բնաւին այլևս չի ծաղկի,
Իզուր և քո երգն, էլ դո՛ւ մի երգի:
Էլ ինձ մի նայիր, թոշնում եմ արդէն,
Մահուան սև թոյնը կաթեց իմ սրտում.

Կաթեց նա փաթեամ քս ծաղիկ շրթէն,
Այժմ շրջում եմ մենակ ու տրտում:

7.

Անուշաբոյր մայիսի պէս կենսալիր,
Ծաղիկ ունիս, շունչ ու արև դիւթական,
Ունիս հայեացք և նայուածքներ սիրալիր,
Թովչուլեթեան հետ թարմութիւնը նորգարնան,
Ու վազում եմ քո ետևից շարունակ,
Սիրապարար սիրտս լեցուած երգերով,
Սիրտս լեցուած օրհներգներով ներգաշնակ
Ու պաշտելու քեզ պատրաստ եմ ես սիրով:
Բայց ան, լռին խուլ ու ծածուկ և անտես,
Մահն է վազում մեր ետևից համարձակ,
Դալուկ աշնան օրն է թեքում դէպի մեզ,
Կարճանում է մեր ասպարէզն ընդարձակ:
Եւ դիւթական մէկ հարուածով անաւոր,
Ամենայն ինչ նոր կերպարանք է առնում,
Երջանկութիւնն բաժակի պէս թունաւոր
Անմիտ կեանքի շիթն է ցայտում իմ շրթին:
Ու ցնցում եմ, և հարց տալիս ինչ էր սա,
Ե՞ս եմ անմիտ, թէ անմիտ է այն հզօրն,
Որ սրտիս մէջ դրաւ տենջեր խիստ ազան,

Եւ ինձնից դուրս նուրբ կերտուածներ փառա-
ւոր,

Ու մտրակեց նրան հեռու միշտ ինձնից,
Ինձ մտրակեց վազել նրա ետևից,
Մեր ետևից՝ մեզնից արագ ու վայրագ
Մահն ուղարկեց. ինչպէս դուրս գալ այս
խաղից:

Ու մնում է ամենայն ինչ սքօղած.
Պորհրդաւոր նա գործում է թագնուած,
Ու մնում եմ նորա դիմաց ես լռին
Յիմարի պէս ապուշի պէս քարացած:

8.

Զգում եմ արդէն, որ հոգիս հոգնած
Հանգստեան երգն է մրմնջում յուշիկ,
Վեհ իդեալներից աչքը դարձրած
Քունն է որոնում քաղցր ու անուշիկ:
Երկար վազելուց արդէն ձանձրացած.
Ներկուել է սիրտս արեան գետերով
Որոնածներս աւանդ, չգտած
Լոկ հոգիս այրուեց անվերջ կարօտով:
Ես ուզում էի դիւթել, հիացնել,
Բարութեան սերմը՝ սերմանել չորս կողմ.

Ես ուզում էի խաւարը ցրել.
 Բարեկամ ճարել անարատ սրտով:
 Ես ուզում էի վշտից ազատուած
 Թագաւոր լինել միայն իմ անձին,
 Մէկ տեղ պատրաստել իմ գլխիս հոգնած
 Բարձ դառնալ տանջուած եղբօրս գլխին:
 Ես ուզում էի չարի դէմ գնալ.
 Մարդկանց մէջ տեսնել ազնիւն ու անգին,
 Ու սև բաղդի դէմ հպարտ հողորտալ.
 Եւ անվախ ուղղել աչքերս երկին:
 Ու թափառեցի փնտրեցի երկար,
 Վտանգն ինձ համար դարձաւ խաղալիք
 Յաղթութիւն տարայ. ոյժովս տկար,
 Բայց ան չգտայ փնտրածս գաղտնիք:
 Բոլոր աչքերում նենգութիւն թաղուած,
 Բոլոր հոգիներն լեցուած երկիւղով,
 Բոլորն էլ իրենց ցաւով զբաղւած
 Մօտ էին գալիս իրար դողալով:
 Ու իրար համար խաւար, թագնուած,
 Գիտունն ազէտից աւելի անսիրտ.
 Խաբում էր, կեղծում շրթներով նենգուած,
 Երեսին կեղծուած լրջութեան ժպիտն:
 Աչքս ուղղեցի և սրտիս խորքում,
 Եւ վտրակումի վէրքերը այնտեղ
 Ինձ տանջում էին յուզում ու այրում,
 Նոյն մեղքի որդիք, նոյն մարդն ամեն տեղ:



10m. № 4

ԳԻՆՆ Է 10 Կ.

2013

7714

